Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան _____

«11» 03 2026թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ. Մեսրոպյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Սեդա Շահինյան,
   - Արմեն Հունանյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   - հանձնաժողովի անդամ,
   - հեռահաղորդակցության վարչության պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Բարսելոնա, Իսպանիա, 2026 թվականի մարտի 2-5-ը:
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Շարժական կապի գլոբալ համակարգի ասոցիացիա (GSMA):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Մասնակցել Շարժական կապի գլոբալ համակարգի ասոցիացիայի (GSMA) կողմից Շարժական կապի համաշխարհային կոնգրեսի (WMC) շրջանակում կազմակերպված նախարարական ծրագիրն (Ministerial Programme):
6. **Քննարկված թեմաները (հարցերը)՝** 2026 թվականին GSMA կողմից կազմակերպվող նախարարական ծրագրին մասնակցել են մոտ 105,000 մասնակիցներ՝ ներառյալ հեռահաղորդակցության ընկերություններ, տեխնոլոգիական

կազմակերպություններ, ստարտափներ, պետական կառույցների ներկայացուցիչներ և ոլորտի փորձագետներ շուրջ 205 երկրներից:

2026 թվականի շարժական կապի համաշխարհային կոնգրեսի առանցքային թեմաներն ընդգրկում էին հեռահաղորդակցության ոլորտում արհեստական բանականության (AI) ինտեգրմանը, արբանյակային կապի գլոբալ համակարգերով մատուցվող նոր՝ մասնավորապես շարժական MSS ծառայությունների կարգավորմանը, շարժական կապի 5G և նորագույն 5G Advanced ու 6G տեխնոլոգիաների կիրառմանը, ինչպես նաև ԵՄ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող նոր՝ «Թվային ցանցերի ակտ/Digital Networks Act» օրենքի կիրարկմանը (որը փոխարինելու է գործող «Էլեկտրոնային հաղորդակցության օրենսգրքին/Electronic Communications Code») վերաբերող հարցեր:

Քննարկվել և կարևորվել է հեռահաղորդակցության ցանցերի կառավարման և շահագործման գործընթացներում AI գործիքների կիրառման մեթոդները, որոնք կարող են նպաստել այդ գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու ցանցերի պահպանման և շահագործման ծախսերի նվազեցմանը:

Շարժական կապի 5G և նորագույն 5G Advanced ու 6G տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող հարցերի քննարկման շրջանակում դիտարկվել են առաջիկա և դրան հաջորդող հնգամյակում նշված տեխնոլոգիաների ցանցերի ներդրման և զարգացման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների տիրույթները և այդ առումով Հեռահաղորդակցության միջազգային միության 2027 թվականի Ռադիոկապի համաշխարհային համաժողովում քննարկվելիք հարցերը: Մասնավորապես, ենթադրվում է 6ԳՀց ռադիոհաճախականությունների տիրույթը կապահովվի 5G Advanced ու 6G տեխնոլոգիաների ցանցերի ներդրման և անհրաժեշտ թողունակությունների ապահովումը մինչև 2030 թվականը, իսկ հետագայում նոր սերնդի տեխնոլոգիաների ցանցերի համար դիտարկվում են ռադիոհաճախականությունների 4,5ԳՀց և 7-8ԳՀց տիրույթները: Կանխատեսվում է, որ 2035-2040 թվականներին յուրաքանչյուր երկրի հեռահաղորդակցության շուկայում անհրաժեշտ կլինի միջինում 2-3 ԳՀց հաճախականության օգտագործում՝ արհեստական բանականության վրա հիմնված ցանցերի և նոր գործիքների, ինչպիսիք են XR-ը (Extended Reality), զգայունակության և հոլոգրաֆիկ հաղորդակցային (Sensing and Holographic Communications) միջոցները/գործիքները:

Միջոցառման ընթացքում քննարկվել են նաև արբանյակային կապի գլոբալ համակարգերով մատուցվող նոր՝ մասնավորապես շարժական MSS ծառայությունների կարգավորման մարտահրավերներին առնչվող հարցերը: Նշվածն առավելապես վերաբերում է այդ ծառայությունների տարածմանն ու դրա մատուցման հիմքում ընկած տեխնոլոգիական, ինչպես նաև կապի կազմակերպման նոր մոտեցումներին (ինչպես օրինակ, օպերատորների հետ համագործակցությամբ կամ ինքնուրույն ծառայություններ մատուցելու դեպքերը) համընթաց անհրաժեշտ կարգավորումներ նախատեսելու խնդիրներին, որոնցով պետք է ապահովվի թե տվյալ տեխնոլոգիայի և կապի ենթակառուցվածքների զարգացումն ու ծառայությունների հասանելիությունը, թե հեռահաղորդակցության շուկայի մրցակցության խթանումը (մրցակցային շուկայի վրա բացասական ազդեցության բացառումը), անվտանգային խնդիրների արդյունավետ լուծումն ու սպառողների շահերի պաշտպանությունը:

ԵՄ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող նոր «Թվային ցանցերի ակտ/Digital Networks Act» օրենքի կիրարկմանը (որը փոխարինելու է գործող «Էլեկտրոնային հաղորդակցության օրենսգրքին/Electronic Communications Code») վերաբերող քննարկման շրջանակում ներկայացվեցին ԵՄ նոր կարգավորումները, որոնց հիմնական նպատակն է խթանել և նպաստել շարժական կապի 5G և առավել նոր սերնդի ցանցերի ու օպտիկամանրաթելային ենթակառուցվածքների հնարավորինս արագ կառուցմանն ու շահագործմանը:

Ի թիվս հեռահաղորդակցության ոլորտի կարգավորմանն առնչվող՝ ներկայացված առանցքային թեմաների նախարարական ծրագրի ընթացքում քննարկվել են թվային տեխնոլոգիաների զարգացմանը և առաջընթացին առնչվող մի շարք հարցեր: Մասնավորապես, քննարկումներ են ծավալվել թվային քաղաքականության և կառավարման, արհեստական բանականության կարգավորման (AI governance), թվային անվտանգության և տվյալների պաշտպանության, կիբերանվտանգության և առցանց խարդախությունների դեմ պայքարի հարցերի շուրջ:

MWC Barcelona 2026 նախարարական ծրագրի շրջանակում ընդգծվեց, որ թվային տնտեսության զարգացումը պահանջում է պետությունների, կարգավորողների և տեխնոլոգիական ընկերությունների համագործակցություն, հատկապես արհեստական բանականության (AI), շարժական կապի 5G և դրան հաջորդող նոր սերնդի 5G Advanced և 6G ցանցերի ներդրման և կիբերանվտանգության ոլորտներում:

7.Հանդիպումները, ելույթները՝ Ֆորումի ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպել են Cullen International անկախ խորհրդատվական և վերլուծական կազմակերպության ներկայացուցիչների, ինչպես նաև ԵՄ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Ֆորումի օրակարգը և դրա ընթացքում տեղի ունեցած քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.mwcbarcelona.com/agenda: Cullen International անկախ խորհրդատվական և վերլուծական կազմակերպության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն սկսել քննարկումներ՝ երկկողմ համագործակցության տարբերակները դիտարկելու՝ ներառյալ նշված կազմակերպության կողմից իրականացված խորհրդատվական և վերլուծական նյութերին հասանելիություն ստանալու մասով:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Առաջարկվում է.

- շարունակել շահագրգիռ պետական մարմինների և օպերատորների հետ քննարկումները՝ շարժական կապի 5G և նորագույն 5G Advanced ու 6G տեխնոլոգիաների ցանցերի ներդրման և զարգացման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործման՝ ներառյալ 4,5ԳՀց, 6-8ԳՀց ռադիոհաճախականությունների մասով՝ զուգահեռաբար ուսումնասիրելով նաև դրանց օգտագործման և կարգավորման միջազգային միտումները,

- «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնությամբ տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում՝ Համաշխարհային բանկի փորձագիտական խմբի և միջազգային խորհրդատվական (փորձագիտական) կազմակերպության, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող գործընկեր մարմինների հետ նախաձեռնել քննարկումներ՝ արբանյակային կապի գլոբալ համակարգերով մատուցվող նոր՝ մասնավորապես շարժական MSS ծառայությունների կարգավորման նպատակահարմարությունն ու արդյունավետ մոտեցումների կիրառման տարբերակները դիտարկելու նպատակով,

- EU4Digital-ի նախաձեռնությամբ տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում ՀԲ փորձագիտական խմբի և միջազգային խորհրդատվական (փորձագիտական) կազմակերպության, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության

ոլորտը կարգավորող գործընկեր մարմինների հետ քննարկել և ուսումնասիրել ԵՄ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող նոր «Թվային ցանցերի ակտ/Digital Networks Act» օրենքով նախատեսված նոր կարգավորումները՝ անհրաժեշտության դեպքում ՀՀ-ում համապատասխան կարգավորումներ մշակելու նպատակով՝ նկատի ունենալով նաև ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ, CEPA) ամրագրված՝ ՀՀ օրենսդրությունը ԵՄ համապատասխան ոլորտային օրենսդրությանը ներդաշնակեցնելու հանձնառությունները,

- նախաձեռնել քննարկումներ՝ Cullen International խորհրդատվական ընկերության ներկայացուցիչների հետ՝ դիտարկելու երկկողմ համագործակցության տարբերակները՝ ներառյալ նշված կազմակերպության կողմից իրականացված խորհրդատվական և վերլուծական նյութերին հասանելիություն ստանալու, ինչպես նաև վերջիններիս կողմից կարգավորման քաղաքականության և տվյալների վերլուծության մասով խորհրդատվություն իրականացնելու նպատակահարմարության մասով:

Գործուղվող ---------- ***Ս.Շահինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 11.03.26թ. ***Ա.Հունանյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 018-ՀՆ, 20.01.2026թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սեդա Շահինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության բաժնի պետ՝ **Արմեն Հունանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բարսելոնա** /Իսպանիայի Թագավորություն /

5. Գործուղման ժամկետները **02.03.2026-06.03.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սեդա Շահինյան	Արմեն Հունանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)			-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	157,500	157,500	315.000
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	548,348	549,408	1,097.756
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	110	110	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48,820	48,820	
	Օրերի քանակը	5	5	
	Ընդամենը (դրամ)	244,101	244,101	488.202
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (ճանապարհածախս)	26,662		26.662
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		976.611	951.009	1,927.620

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 11.03.2026թ.